Հայ ռազմագերիների տեսանյութ

2023-004-FB-MR

Գործի ամփոփագիրը

Վերահսկիչ խորհուրդը ուժի մեջ է թողել Meta-ի որոշումը՝ պահպանել Facebook-ի հրապարակումը, որը նույնականացվող ռազմագերիներ պատկերող տեսանյութ էր պարունակում, և տեսանյութի վրա «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրան (warning screen) ավելացնել: Խորհուրդը գտել է, որ Meta-ն ճիշտ է լրատվական կարևորության (newsworthiness) հիմքով թույլտվություն կիրառել հրապարակմանը, որը հակառակ դեպքում պետք է հեռացվեր, քանի որ կխախտեր Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ Համայնքի ստանդարտը: Այնուամենայնիվ, Խորհուրդը Meta-ին առաջարկում է ուժեղացնել այս տեսակի կոնտենտի դիտարկման ներքին ուղեցույցը և համապատասխան մարմինների կողմից մարդու իրավունքների խախտման ապացույցներ պահպանելու և տարածելու պրոտոկոլ մշակել:

Գործի մասին

2022 թվականի հոկտեմբերին Facebook-ի օգտատերերից մեկը էջում տեսանյութ է հրապարակել, որը ներկայացվում է որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում Ադրբեջանի կողմից հայերի դեմ կատարված ենթադրյալ ռազմական հանցագործությունների փաստագրում: Այս հակամարտությունը կրկին բռնկվեց 2020թ. սեպտեմբերին և վերաճեց Հայաստանում մարտերի 2022թ. սեպտեմբերին՝ իր հետևում թողնելով հազարավոր զոհեր և հարյուրավոր անհետ կորածներ:

Տեսանյութն սկսվում է օգտատիրոջ կողմից տարիքային նախազգուշացմամբ, որ այն նախատեսված է միայն 18-ից բարձր տարիքի մարդկանց համար, և անգլերեն տեքստով, որտեղ գրված է՝ «Կանգնեցրեք Ադրբեջանի ահաբեկչությունը: Աշխարհը պետք է կանգնեցնի ագրեսորներին»: Տեսանյութում պատկերված է ռազմագերիների գերեվարումը:

Այն ցուցադրում է մի քանի մարդու, որոնք, ըստ երևույթին, ադրբեջանցի զինվորներ են, որոնք որոնումներ են կատարում փլվածքներում, իսկ նրանց դեմքերը թվայնորեն ծածկված են սև քառակուսիներով: Նրանք փլվածքներում հայտնաբերում են մարդկանց, ովքեր տեսանյութում ներկայացված են որպես հայ զինվորներ, ում դեմքերը ծածկված չեն, և նրանց հնարավոր է նույնականացնել: Նրանցից ոմանք կարծես թե վիրավոր են, իսկ մյուսները՝ մահացած: Տեսանյութն ավարտվում է նրանով, որ կադրում չերևացող մարդը, հնարավոր է՝ նկարահանողը, անընդհատ հայհոյանքներ է հնչեցնում և ռուսերենով ու թուրքերենով վիրավորական արտահայտություններ ուղղում գետնին նստած վիրավոր զինվորին:

Ենթագրում, որն անգլերեն և թուրքերեն լեզուներով է, օգտատերը հայտարարում է, որ տեսանյութը պատկերում է հայ ռազմագերիներին խոշտանգող ադրբեջանցի զինվորների: Ենթագրում նշված է նաև Եվրոպական Միության և Ադրբեջանի միջև 2022թ. հուլիսին կնքված գազային գործարքը, ըստ որի մինչև 2027թ. կրկնապատկվելու է Ադրբեջանից գազի արտահանումը:

Հիմնական եզրակացությունները

Խորհուրդը գտնում է, որ չնայած այս դեպքում բովանդակությունը խախտում է Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ համայնքի ստանդարտը, Meta-ն լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը ճիշտ է կիրառել՝ թույլ տալու համար, որ կոնտենտը մնա Facebook-ում, իսկ տեսանյութի բովանդակությունը, համաձայն Բռնի և անընդունելի կոնտենտի վերաբերյալ համայնքի ստանդարտի՝ «նշել որպես անհանգստություն պատճառող», նախազգուշացնող էկրան է պահանջում: Այս որոշումները համահունչ են Meta-ի արժեքներին և մարդու իրավունքների նկատմամբ պարտավորություններին:

Այս գործը կարևոր հարցեր է բարձրացնում կոնֆլիկտային իրավիճակներում բովանդակության հանդեպ զսպվածության (content moderation) Meta-ի մոտեցման մասին, երբ ռազմագերիների ինքնությունը և գտնվելու վայրը բացահայտելը կարող է խաթարել նրանց արժանապատվությունը և ուղղակի վնաս հասցնել նրանց: Մարդկային արժանապատվությանն առնչվող մտահոգությունները սուր կերպով են ի հայտ գալիս այն իրավիճակներում, երբ բանտարկյալները ցուցադրվում են նվաստացուցիչ կամ անմարդկային պայմաններում: Միևնույն ժամանակ, նման ցուցադրումը կարող է հանրային քննարկումների հիմք հանդիսանալ և բարձրացնել

իրազեկվածությունը հնարավոր վատ վերաբերմունքի՝ ներառյալ Մարդու իրավունքների միջազգային նորմերի և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների վերաբերյալ: Այն կարող է նաև խթանել իրավունքները պաշտպանող գործողությունները և ապահովել հաշվետվողականությունը: Meta-ն եզակի դիրքում է՝ աջակցելու համար ապացույցների պահպանմանը, որոնք կարող են կարևոր լինել միջազգային հանցագործությունների դատական հետապնդման և մարդու իրավունքների դատավարություններին աջակցելու առումով:

Այն մասշտաբն ու արագությունը, որով ռազմագերիների պատկերները կարող են տարածվել սոցիալական ցանցերի միջոցով, բարդացնում են այդ մրցակցային շահերի կարգավորման խնդիրը: Հաշվի առնելով ռազմագերիների առջև ծառացած լուրջ վնասներն ու ռիսկերը՝ խորհուրդը գտնում է, որ Meta-ի լռելյայն կանոնը, որն արգելում է այնպիսի տեղեկությունների հրապարակումը, որոնք կարող են բացահայտել ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը, համապատասխանում է մարդու իրավունքների առումով ընկերության պարտավորություններին՝ համաձայն Բիզնեսի և մարդու իրավունքների ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքների (UNGP, մեկնաբանություն 12-րդ սկզբունքի վերաբերյալ): Այդ պարտավորությունները մեծանում են զինված հակամարտության ժամանակ և պետք է հիմնվեն միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի վրա: Խորհուրդը համաձայն է Meta-ի հետ առ այն, որ հանրային հետաքրքրությունից ելնելով՝ նախազգուշացնող էկրանով կոնտենտի պահպանումը հարթակի վրա, գերակշիռ է ռազմագերիների անվտանգությանը և արժանապատվությանն սպառնացող ռիսկի հանդեպ:

Վերահսկիչ խորհրդի որոշումը

Վերահսկիչ խորհուրդն ուժի մեջ է թողնում Meta-ի որոշումը՝ պահպանել հրապարակումը Facebook-ում՝ «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրանով:

Խորհուրդը նաև առաջարկում է, որ Meta-ն՝

- Տեղեկությունները պահպանելու և, անհրաժեշտության դեպքում, իրավասու մարմինների հետ կիսելու պրոտոկոլ մշակի՝ օգնելու հետաքննություններին և դատավարություններին՝ դաժան հանցագործությունները կամ մարդու իրավունքների լուրջ խախտումները շտկելու կամ պատժելու համար:

- Լրացուցիչ ուղեցույցներ տրամադրի գրախոսներին (reviewer) և էսկալացիոն խմբերին՝ ավելի լավ տեղեկացնելու էսկալացիայի լրատվական կարևորության ու ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը բացահայտող բովանդակության գնահատման մասին:
- Օգտատերերի համար ավելի մեծ հստակություն ապահովելու նպատակով՝ Թափանցիկության կենտրոնում լրատվական կարևորության հիմքով թույլտվության բացատրությանն ավելացնի կոնտենտի օրինակ, որը բացահայտում է ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը, բայց որը պահպանված է հանրային հետաքրքրության պատճառով:
- Հանրայնորեն տարածի ապացույցների պահպանման պրոտոկոլը, որն առնչվում է դաժան հանցագործություններին և մարդու իրավունքների կոպիտ խախտումներին:

* Գործի հակիրճ ամփոփագիրն ընդհանուր պատկեր է տալիս, և նախադեպային արժեք չունի:

<u>Գործի կապակցությամբ ամբողջական որոշումը</u>

1. Որոշման ամփոփագիրը

1. Վերահսկիչ խորհուրդն ուժի մեջ է թողել Meta-ի որոշումը՝ պահպանել Facebook-ի հրապարակումը, որը նույնականացվող ռազմագերիներ պատկերող տեսանյութ էր պարունակում, և տեսանյութի վրա «նշել որպես անհանգստություն պատճառող»

նախազգուշացնող էկրան ավելացնել: Խորհուրդը գտնում է, որ Meta-ն ճիշտ է լրատվական կարևորության հիմքով թույլտվություն կիրառել հրապարակմանը, որը հակառակ դեպքում պետք է հեռացվեր, քանի որ զինված հակամարտության համատեքստում ռազմագերիների ինքնությունը բացահայտելու պատճառով կխախտեր Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ Համայնքի ստանդարտը: «Նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրան պահանջվում է՝ համաձայն Բռնի և անընդունելի կոնտենտի վերաբերյալ համայնքի ստանդարտի: Այս որոշումները համահունչ են Meta-ի արժեքներին և մարդու իրավունքների նկատմամբ պարտավորություններին:

2. Այս գործը, որը Meta-ն ներկայացրել է Խորհրդին, կարևոր հարցեր է բարձրացնում կոնֆլիկտային իրավիճակներում բովանդակության հանդեպ զսպվածության Meta-ի մոտեցման մասին, երբ ռազմագերիների ինքնությունը և գտնվելու վայրը բացահայտելը կարող է խաթարել նրանց արժանապատվությունը և ուղղակի վնաս հասցնել նրանց: Մարդկային արժանապատվությանն առնչվող մտահոգությունները կարող են սուր կերպով ի հայտ գալ այն իրավիճակներում, երբ բանտարկյալները ցուցադրվում են որպես անպաշտպան կամ նվաստացուցիչ պայմաններում՝ կապված նրանց կյանքի, անվտանգության և գաղտնիության, նաև խոշտանգումներից, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրենց իրավունքի, ինչպես նաև իրենց ընտանիքի անդամների գաղտնիության և անվտանգության իրավունքի հետ: Միևնույն ժամանակ, նման ցուցադրումը կարող է նաև հանրային քննարկումների հիմք հանդիսանալ և բարձրացնել իրազեկվածությունը հնարավոր վատ վերաբերմունքի՝ ներառյալ Մարդու իրավունքների միջազգային նորմերի և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների վերաբերյալ: Այն կարող է նաև խթանել իրավունքները պաշտպանող գործողությունները և ապահովել հաշվետվողականությունը: Meta-ն նաև եզակի դիրքում է՝ աջակցելու համար ապացույցների պահպանմանը, որոնք կարող են կարևոր լինել միջազգային հանցագործությունների դատական հետապնդման և մարդու իրավունքների դատավարություններին աջակցելու առումով:

3. Այն մասշտաբն ու արագությունը, որով ռազմագերիների պատկերները կարող են տարածվել սոցիալական ցանցերի միջոցով, բարդացնում են այդ մրցակցային շահերի կարգավորման խնդիրը: Հաշվի առնելով ռազմագերիների առջև

ծառացած լուրջ վնասներն ու ռիսկերը՝ խորհուրդը գտնում է, որ Meta-ի լռելյայն կանոնը, որն արգելում է այնպիսի տեղեկությունների հրապարակումը, որոնք կարող են բացահայտել ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը, համապատասխանում է մարդու իրավունքների առումով ընկերության պարտավորություններին՝ համաձայն Բիզնեսի և մարդու իրավունքների ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքների (UNGP, մեկնաբանություն 12-րդ սկզբունքի վերաբերյալ), որոնք ավելի են ուժեղանում զինված հակամարտությունների ընթացքում, և ինչի մասին պետք է հաղորդել՝ միջազգային մարդասիրական օրենքի նորմերին համապատասխան: Խորհուրդը համաձայն է Meta-ի հետ առ այն, որ հանրային հետաքրքրությունից ելնելով՝ նախազգուշացնող էկրանով կոնտենտի պահպանումը հարթակի վրա գերակշիռ է ռազմագերիների անվտանգությանը և արժանապատվությանն սպառնացող ռիսկի հանդեպ: Հարթակի վրա կոնտենտի պահպանումն անհրաժեշտ է՝ ապահովելու հանրության իրավունքը՝ իմանալ լուրջ իրավախախտումների և դրանց յուրահատուկ համատեքստի մասին, որպեսզի իրավախախտումների հանրային բացահայտման միջոցով հնարավորինս կանխվեն, մեղմվեն և ուղղվեն մարդու իրավունքներին պատճառված լուրջ վնասները:

4. Խորհուրդն առաջարկում է Meta-ին լրացուցիչ ուղեցույցներ տրամադրել գրախոսներին և էսկալացիոն խմբերին՝ ապահովելու համար, որ ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը բացահայտող բովանդակությունը դիտարկվի փորձառու անձանց կողմից՝ առանձին կոնկրետ դեպքերում: Meta-ն պետք է ավելի մանրամասնեցված չափանիշներ մշակի այդ դեպքերում լրատվական կարևորության գնահատումն ուղղորդելու համար, որոնք պետք է թափանցիկ կերպով տարածվեն: Խորհուրդը Meta-ին հորդորում է տեղեկությունները պահպանել և, անհրաժեշտության դեպքում, իրավասու մարմինների հետ կիսել՝ օգնելու հետաքննություններին և դատավարություններին՝ դաժան հանցագործությունները կամ մարդու իրավունքների լուրջ խախտումները շտկելու կամ պատժելու համար:

2. Գործի նկարագրությունը և նախապատմությունը

5. 2022 թվականի հոկտեմբերին Facebook-ի օգտատերերից մեկը էջում տեսանյութ է հրապարակել, որը ներկայացվում է որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում Ադրբեջանի կողմից հայերի դեմ կատարված

ենթադրյալ ռազմական հանցագործությունների փաստագրում: Այս հակամարտությունը կրկին բռնկվեց 2020թ. սեպտեմբերին՝ Լեռնային Ղարաբաղի 44-օրյա երկրորդ պատերազմի ժամանակ, և վերաճեց Հայաստանում մարտերի 2022թ. սեպտեմբերի՝ իր հետևում թողնելով հազարավոր զոհեր և հարյուրավոր անհետ կորածներ:

6. Ենթագրում, որն անգլերեն և թուրքերեն լեզուներով է, օգտատերը հայտարարում է, որ տեսանյութը պատկերում է հայ ռազմագերիներին խոշտանգող ադրբեջանցի զինվորների: Ենթագրում ուշադրություն է նաև դարձվում Եվրոպական Միության և Ադրբեջանի միջև 2022թ, հուլիսին կնքված գազային գործարքին, ըստ որի մինչև 2027թ. կրկնապատկվելու է Ադրբեջանից գազի արտահանումը:

7. Տեսանյութն սկսվում է օգտատիրոջ կողմից տարիքային նախազգուշացմամբ, որ այն նախատեսված է միայն 18-ից բարձր տարիքի մարդկանց համար, և անգլերեն տեքստով, որտեղ գրված է՝ «Կանգնեցրեք Ադրբեջանի ահաբեկչությունը: Աշխարհը պետք է կանգնեցնի ագրեսորներին»: Տեսանյութը ցույց է տալիս զինվորների՝ որպես ռազմագերիների ձերբակալումը: Այնտեղ ցուցադրվում է կարծես թե ադրբեջանցի զինվոր հանդիսացող մի քանի մարդ, որոնք որոնումներ են կատարում փլվածքներում, իսկ նրանց դեմքերը թվայնորեն ծածկված են սև քառակուսիներով: Նրանք փլվածքներում հայտնաբերում են մարդկանց, ովքեր ենթագրերում նկարագրված են որպես հայ զինվորներ, որոնց դեմքերը ծածկված չեն, և նրանց հնարավոր է նույնականացնել: Նրանցից ոմանք կարծես թե վիրավոր են, իսկ մյուսները՝ մահացած: Նրանք փլվածքներից մի զինվորի են քաշում, ով ցավից գոռում է: Նրա դեմքը տեսանելի է, և կարծես թե՝ վիրավոր է: Տեսանյութն ավարտվում է նրանով, որ կադրում չերևացող մարդը, հնարավոր է՝ նկարահանողը, անընդհատ հայհոյանքներ է հնչեցնում և ռուսերենով ու թուրքերենով վիրավորական արտահայտություններ ուղղում գետնին նստած վիրավոր զինվորին՝ նրան ասելով. որ վեր կենա: Անհատը փորձում է դա անել: Էջը, որտեղ տեղադրվել է բովանդակությունը, ունի 1000-ից պակաս հետևորդ: Այս կոնտենտը դիտվել է 100 անգամից պակաս և ստացել՝ 10-ից պակաս արձագանք: Ոչ մի օգտատիրոջ կողմից այն չի տարածվել կամ հաղորդվել որպես խախտում:

8. Meta-ն հայտնում է Խորհրդին, որ վերահսկում է իրավիճակը, քանի որ հակամարտությունը շարունակվում է: Meta-ի գլոբալ գործողությունների (Global Operations) թիմը համակարգված գործել է Meta-ի անվտանգության թիմի հետ՝

ռիսկերի մոնիտորինգ իրականացնելու համար, որը ներառում էր խնդրի հետ կապված արտաքին ազդանշանների մոնիտորինգ (օրինակ՝ նորություններ և սոցիալական լրատվամիջոցների միտումներ): Մոնիտորինգի ընթացքում անվտանգության ծառայությունը հայտնաբերել է Twitter-յան գրառումներ, որոնցում ցուցադրվել է համացանցում տարածվող տեսանյութ, որտեղ ադրբեջանցի զինվորները խոշտանգում են հայ ռազմագերիներին, այնուհետև Facebook-ի նույն տեսանյութը նույնականացվել է տվյալ դեպքի հետ: Անվտանգության թիմը հրապարակումն ուղարկել է Facebook-ին՝ հավելյալ քննության համար, որի գործառույթը Meta-ն նկարագրում է որպես «էսկալացիա»: Երբ կոնտենտը էսկալացվել է, այն ուղարկվել է Meta-ի լրացուցիչ թիմերին՝ քաղաքականության և անվտանգության առումով քննության համար: Այս դեպքում Meta-ի գլոբալ գործողությունների թիմը որոշել է էսկալացնել կոնտենտը Meta-ի քաղաքականության թիմերին՝ լրատվական կարևորության վերաբերյալ քննության համար:

9. Դիտարկումից հետո, երկու օրվա ընթացքում, կոնտենտը հրապարակվել է, Meta-ն լրատվական կարևորության հիմքով թույլտվություն է տվել, ինչը թույլատրել է կոնտենտի գտնվելը Meta-ի հարթակի վրա, ինչը, հակառակ դեպքում, կխախտեր քաղաքականությունը, եթե հանրային հետաքրքրությունը չգերիշխեր վնասի ռիսկերի հանդեպ: Լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը կարող է կիրառվել Meta-ի մասնագիտացված թիմերի կողմից այն բանից հետո, երբ կոնտենտն էսկալացվել է դիտարկման հավելյալ շերտերի:

10. Որպես Meta-ի քաղաքականության թիմի կողմից իրականացված ընդլայնված ստուգման մաս՝ Բռնի և անընդունելի կոնտենտի վերաբերյալ քաղաքականության համաձայն՝ «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրանն ավելացվել է Graphic Violence Media Matching Service (MMS) շտեմարանին, ինչն ավտոմատ կերպով նախազգուշացնող էկրան է դնում տեսանյութի և հարթակի վրա հայտնաբերված նմանատիպ տեսանյութերի վրա: Սակայն, տեխնիկական և մարդկային սխալների պատճառով սա չի հաջողվել, և ձեռքով լրացվել է մոտ մեկ ամիս անց:

11. Meta-ն գործը փոխանցել է Խորհրդին՝ հայտարարելով, որ այն ցուցադրում է մարտահրավերը, որը պահանջվում է «հավասարակշռելու այս հարցի իրազեկվածության բարձրացման կարևորությունը և հնարավոր վնասը, որը

կարող է հասցվել ռազմագերիների ինքնության բացահայտումից»: Meta-ն խնդրել է Խորհրդին՝ քննել այն հարցը, թե արդյոք կոնտենտը թույլ տալու Meta-ի որոշումը համապատասխանում է իր «Անվտանգություն», «Արժանապատվություն» և «Ձայներ» արժեքների և մարդու իրավունքների միջազգային սկզբունքներին հավատարիմ լինելու միջև հավասարակշռությանը:

3. Վերահսկիչ խորհրդի լիազորությունները և գործունեության շրջանակը

12. Խորհուրդն իրավասու է վերանայելու որոշումները, որոնք Meta-ն ներկայացնում է քննության (Խարտիայի Հոդված 2, Բաժին 1, Ներքին կանոնադրության Հոդված 2, Բաժին 2.1.1):

13. Խորհուրդը կարող է ուժի մեջ թողնել կամ չեղարկել Meta-ի որոշումը (Խարտիայի Հոդված 3, բաժին 5), և այս որոշումը պարտադիր է ընկերության համար (Խարտիայի Հոդված 4): Meta-ն նաև պետք է գնահատի իր որոշման կիրառելիությունը զուգահեռ համատեքստով նույնական բովանդակության նկատմամբ (Խարտիայի Հոդված 4): Խորհրդի որոշումները կարող են ներառել քաղաքականության վերաբերյալ խորհրդատվական հայտարարություններ՝ ոչ պարտավորեցնող առաջարկներով, որոնց Meta-ն պետք է արձագանքի (Խարտիայի Հոդված 3, Բաժին 4, Հոդված 4): Այն դեպքերում, երբ Meta-ն պարտավորվում է գործել առաջարկություններին համապատասխան, խորհուրդը վերահսկում է դրանց կատարումը:

4. Իշխանության և ուղղորդման աղբյուրները

14. Այս գործի առումով Խորհրդի վերլուծությունը հիմնվել է հետևյալ չափանիշների և նախադեպերի վրա.

I. *Վերահսկիչ խորհրդի որոշումները.*

15. Վերահսկիչ խորհրդի նախկին ամենահամապատասխան որոշումները ներառում են՝

- «Հնդկաստանում սեռական ոտնձգությունների մասին տեսանյութը» (2022-012-IG-MR)
- «Նիգերիայում եկեղեցու վրա հարձակումից հետո արված տեսանյութը» (2022-011-IG-UA)
- «Ռուսական պոեմը» (2022-008-FB-UA)
- «Սուդանի անընդունելի տեսանյութը» (2022-002-FB-MR)
- «Բողոքի ցույցերը Կոլումբիայում» (2021-010-FB-UA)
- «Նախկին նախագահ Թրամփի պաշտոնանկությունը» (2021-001-FB-FBR)

II. *Meta-ի քաղաքականությունը կոնտենտի վերաբերյալ.*

16. Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ համայնքային ստանդարտը՝ «քաղաքականության հիմնավորում» խորագրի ներքո, ասում է, որ «ձգտելով կանխել և խափանել արտացանցային վնաս պատճառող և ընդօրինակող վարքը, մենք արգելում ենք մարդկանց նպաստել, կազմակերպել, խթանել կամ թույլ տալ որոշակի հանցավոր կամ վնասաբեր գործողություններ, որոնք ուղղված են մարդկանց, բիզնեսի, գույքի կամ կենդանիների դեմ: Այնտեղ նաև ասվում է, որ «մենք մարդկանց թույլատրում ենք [...] ուշադրություն հրավիրել այն վնասաբեր կամ հանցավոր գործունեության վրա, որին նրանք կարող են ականատես կամ մասնակից լինել, քանի դեռ նրանք չեն պաշտպանում կամ համակարգում վնաս պատճառելը»: Համաձայն՝ 2022 թ. մայիսի 4-ին ավելացված՝ «լրացուցիչ տեղեկություններ և/կամ համատեքստը հաշվի առնելու մասին» խորագրով կանոնի, Meta-ն մասնավորապես արգելում է այն «կոնտենտը, որը բացահայտում է ռազմագերու ինքնությունը կամ գտնվելու վայրը զինված հակամարտության համատեքստում՝ հրապարակելով նրա անունը, նույնականացման համարը և (կամ) նկարները» և չի թվարկում որևէ հատուկ բացառություններ այս կանոնից:

17. Բռնի և անընդունելի կոնտենտի վերաբերյալ Համայնքի ստանդարտը՝ «քաղաքակության հիմնավորում» խորագրի ներքո, ասում է, որ այն գոյություն ունի «անհանգստություն պատճառող տեսարաններից օգտատերերին պաշտպանելու համար»: Քաղաքականությունը հետագայում մանրամասնում է, որ «պատկերները, որոնք ցույց են տալիս անձի կամ մարդկանց բռնի մահը դժբախտ պատահարի կամ սպանության հետևանքով» և «պատկերները, որոնք ցույց են տալիս անձի կամ մարդկանց նկատմամբ կատարված խոշտանգման գործողությունները»,

տեղադրվում են նախազգուշացնող էկրանի հետևում, որպեսզի «մարդիկ իմանան, որ կոնտենտը կարող է անհանգստություն պատճառող լինել», և միայն 18 ու ավելի բարձր տարիքի մեծահասակները կարող են դիտել կոնտենտը: Համաձայն քաղաքականության՝ կանոնների «չհրապարկել» բաժինը բացատրում է, որ օգտատերերը չեն կարող նախազգուշացնող էկրան ունեցող պատկերներին առնչվող սադիստական մեկնաբանություններ անել:

18. Խորհրդի վերլուծությունը հենվում է Meta-ի հանձնառությանը «Զայնին», որն ընկերությունը նկարագրում է որպես՝ «առաջնահերթություն», և նրա «Անվտանգություն», «Գաղտնիություն» և «Արժանապատվություն» արժեքներին:

19. Լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը բացառություն է ընդհանուր քաղաքականությունից, որը կարելի է կիրառել քաղաքականության բոլոր ոլորտներում՝ Համայնքի ստանդարտների ներքո՝ ներառյալ ռազմագերիների մասին կանոնը: Լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը բացատրվում է Meta-ի «Զայնին նվիրվածության» ներքո: Այն թույլ է տալիս կանոններն այլ կերպ խախտող կոնտենտը պահել հարթակում, եթե հանրային հետաքրքրության արժեքը գերակշիռ է վնասի ռիսկի հանդեպ: Համաձայն Meta-ի մոտեցմանը լրատվական կարևորություն ունեցող կոնտենտին, որը ներկայացված է Համայնքի ստանդարտների ներածության մեջ, նման գնահատումներ արվում են միայն «հազվագյուտ դեպքերում»՝ Կոնտենտի քաղաքականության (Content Policy) թիմին փոխանցելուց հետո: Այս թիմը գնահատում է, թե արդյոք տվյալ կոնտենտն անմիջական սպառնալիք է ներկայացնում Հանրային առողջությանը կամ անվտանգությանը կամ բարձրաձայնում է այն հեռանկարները, որոնք ներկայումս քննարկվում են քաղաքական գործընթացի շրջանակներում: Այս գնահատումը հաշվի է առնում տվյալ երկրի յուրահատուկ հանգամանքները՝ ներառյալ, եթե երկիրը պատերազմում է: Թեև խոսնակի ինքնությունը կարևոր գործոն է, այդ թուլտվությունը չի սահմանափակվում միայն լրատվական միջոցների կողմից հրապարակված կոնտենտով:

III. Meta-ի պարտականությունները մարդու իրավունքների առումով

20. Բիզնեսի և մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքները (UNGPs), որոնք հաստատվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2011 թվականին, սահմանում են մասնավոր բիզնեսի կամավոր պատասխանատվության շրջանակը մարդու իրավունքների ոլորտում: 2021

թվականին Meta-ն հրապարակեց իր Մարդու իրավունքների ոլորտում կորպորատիվ քաղաքականությունը, որտեղ վերահաստատեց մարդու իրավունքները հարգելու իր հանձնառությունը՝ համապատասխան UNGP-ների: Կարևոր է նշել, որ UNGP-ներն ավելի մեծ պատասխանատվություն են պարտադրում հակամարտության պայմաններում գործող ձեռնարկություններին («Բիզնես, Մարդու իրավունքներ և հակամարտությունից տուժած տարածաշրջաններ. ավելի ակտիվ գործողությունների ճանապարհին», A/75/212): Այս գործում մարդու իրավունքների առումով Meta-ի պարտավորությունների վերլուծությունը Խորհրդի կողմից հենված է հետևյալ միջազգային չափանիշների վրա՝ ներառյալ միջազգային մարդասիրական իրավունքի դաշտը (հայտնի է նաև որպես՝ «զինված հակամարտությունների օրենք»).

- Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը. 2011թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ICCPR), Հոդված 19-ի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի ընդհանուր բնույթի դիտողություն՝ No. 34, Կարծիք ունենալու և ազատ արտահայտելու իրավունքի խրախուսման և պաշտպանության հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի զեկույցներ՝ A/68/362 (2013), A/HRC/38/35 (2018), A/74/486 (2019), A/77/288 (2022):
- Կյանքի իրավունքը. ICCPR-ի Հոդված 6:
- Խոշտանգումներից, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքը. ICCPR-ի Հոդված 7:
- Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. ICCPR-ի Հոդված 17:
- Ռազմագերիների պաշտպանությունը վիրավորանքներից և հասարակական հետաքրքրասիրությունից. Հոդված 13, պարագրաֆ 2՝ ռազմագերիների հանդեպ վերաբերմունքին առնչվող III կոնվենցիա (Ժնևյան III կոնվենցիա), Ժնևյան (III) կոնվենցիայի մեկնաբանություններ, Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ICRC/ԿԽՄԿ), 2020թ. (Ժնևյան III կոնվենցիայի մեկնաբանություններ):

5. Օգտատիրոջ նյութերը

21. Meta-ի դիմումից և գործը քննության ընդունելու Խորհրդի որոշումից հետո օգտատիրոջը հաղորդագրություն է ուղարկվել՝ տեղեկացնելով նրան Խորհրդի քննարկման մասին և հնարավորություն տալով նրան դիմում ներկայացնել Խորհրդին: Օգտատերը դիմում չի ներկայացրել

6. Meta-ի նյութերը

22. Meta-ն գործը հանձնել է խորհրդի քննարկմանը, «քանի որ այն ընդգծում է [Meta]-ի առջև ծառացած մարտահրավերները, երբ որոշում է, թե արդյոք կոնտենտի լրատվական կարևորությունը գերակշռում է պատերազմի և բռնության համատեքստում վնաս պատճառելու ռիսկը»: Չնայած՝ կոնտենտը խախտում է Վնասի համակարգման և հանցագործության խրախուսման մասին Meta-ի քաղաքականությունը, լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը կիրառվել է Ադրբեջանի և Հայաստանի միջև հակամարտության ընթացքում «ռազմագերիների նկատմամբ բռնության մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով»: Meta-ն ասաց, որ գործը «նշանակալի» է ընթացող զինված հակամարտության պատճառով և «դժվար» է, քանի որ պահանջում է «հավասարակշռել այս հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացման արժեքն՝ ընդդեմ հնարավոր վնասի, որը պատճառվում է ռազմագերիների ինքնության բացահայտմամբ»:

23. Meta-ն բացատրում է, որ նա արգելում է ռազմագերիների «բացահայտումը», բայց էսկալացիոն թիմերը «հավելյալ համատեքստ» են պահանջում՝ այդ կանոնը կիրարկելու համար: Meta-ն ավելացրել է այս կանոնը, որպեսզի արտացոլի այն փաստը, որ նրանք լուրջ են վերաբերվում ռազմագերիների անվտանգությանը և արժանապատվությանը՝ չնայած հանրային ցուցադրության դնելու համար իրենց հարթակների օգտագործման ռիսկերին՝ նշելով ինչպես ICCPR-ի 19-րդ հոդվածում ամրագրված ազատորեն կարծիք արտահայտելու սկզբունքները, այնպես էլ Ժնևյան կոնվենցիաների ուղեցույցները: Խորհուրդը հասկանում է, որ դա նշանակում է, որ նման կոնտենտը հեռացնելու համար ներքին քննության խմբերը պետք է այն փոխանցեն Meta-ի ներքին թիմերին ստուգման համար, կամ ավելի մեծ մասշտաբի գրախոսներին պետք կլինի կոնտենտը փոխանցել այդ թիմերին: Այդ թիմերն ունակ են կոնտենտից դուրս հաշվի առնել ենթատեքստային գործոնները՝ հարկադիր գործողությունների վերաբերյալ որոշում ընդունելու համար: Կոնտենտն ավտոմատ կերպով կհեռացվի, միայն եթե նույնական է կամ մոտ է այն կոնտենտներին, որոնք Meta-ի ներքին թիմերը գնահատել են որպես ստանդարտները խախտող և ավելացվել են մեդիա համադրման շտեմարաններում:

24. Ի պատասխան Խորհրդի հարցերին՝ Meta-ն հաստատել է, որ այս դեպքում կոնտենտը խախտող համարելու համար դիտարկվել է լրացուցիչ համատեքստը՝

ներառյալ (i) համազգեստը հաստատում է, որ նույնականացվող զինվորները հայ զինվորներ են, և (ii) Ադրբեջանի և Հայաստանի միջև ընթացող հակամարտության իմացությունը: Գրախոսների համար նախատեսված «Հայտնի հարցեր» անվանումով ներքին ուղեցույցներում «ռազմագերին» սահմանվում է որպես «զինված ուժի ներկայացուցիչ, ով գերեվարվել է հակառակորդ ուժի կողմից կամ ընկել նրանց ձեռքը զինված հակամարտության ընթացքում կամ անմիջապես դրանից հետո»: Այդ կանոնին ուղեկցող Ներքին իրագործման ստանդարտներում Meta-ն բացատրում է, որ այն կոնտենտը, որը ռազմագերու ինքնությունը կամ գտնվելու վայրը բացահայտում է՝ տարածելով նրա անունը, ազգանունը, նրան նույնականացնող համարը և/կամ նրան դեմքը նույնականացնող պատկերը, պետք է հեռացվի, նույնիսկ եթե տարածվել է «դատապարտող կամ իրազեկվածությունը բարձրացնող համատեքստում»:

25. Ի պատասխան Խորհրդի հարցերին՝ Meta-ն նշել է, որ Հակաճգնաժամային քաղաքականության պրոտոկոլը չի օգտագործվել Լեռնային Ղարաբաղում երկրորդ պատերազմի կամ Ադրբեջանի և Հայաստանի միջև շարունակվող սահմանային բախումների ժամանակ: Հակաճգնաժամային քաղաքականության պրոտոկոլը Meta-ի քննիչ խմբերին լրացուցիչ հնարավորություններ է տալիս կիրառելու միայն էսկալացիային (escalation-only) ուղղված քաղաքականություն, և որը ստեղծվել է ի պատասխան՝ «նախկին նախագահ Թրամփի պաշտոնանկության» գործով խորհրդի առաջարկությանը: Meta-ն բացատրեց, որ քանի որ կա ռազմագերիներին նվիրված կոնտենտի հեռացման մշտական քաղաքականություն, ներքին էսկալացիայի թիմի կողմից այդ կոնտենտի հեռացման ստանդարտ գործընթացը չէր փոխվի, եթե պրոտոկոլն ակտիվացվեր:

26. Լրատվական կարևորության հիմքով թույլտվության վերաբերյալ Meta-ն ասում է, որ անցկացրել է հավասարակշռող թեստ, որը գնահատում է հանրային շահերն ի համեմատ վնասի ռիսկի՝ հաշվի առնելով մի քանի գործոն. (i) արդյոք կոնտենտը վեր է հանում հանրային առողջության կամ անվտանգության անմիջական սպառնալիքները, (ii) արդյոք կոնտենտը բարձրաձայնում է այն հեռանկարները, որոնք ներկայումս քննարկվում են քաղաքական գործընթացի շրջանակներում, (iii) խոսքի բնույթը՝ ներառյալ, թե արդյոք այն վերաբերում է կառավարմանը կամ քաղաքականությանը, (iv) երկրի քաղաքական կառուցվածքը՝ ներառյալ, թե արդյոք այն ազատ մամուլ ունի, և (v) երկրին բնորոշ այլ հանգամանքները (օրինակ՝ արդյոք ընտրություններ են ընթանում կամ արդյոք երկիրը պատերազմում է):

27. Meta-ն գիտակցում է այդ տեսանյութի անընդունելի բնույթը և ռիսկերը, որոնց կարող են հանդիպել ռազմագերիները, երբ նույնականացվեն սոցիալական մեդիայում: Ի պատասխան Խորհրդի հարցերին՝ Meta-ն հայտարարեց, որ գիտակցում է, որ ընտանիքի անդամները և ընկերները կարող են օստրակիզմի, կասկածների կամ նույնիսկ բռնության թիրախ դառնալ, երբ ռազմագերիները նույնականացվում են կամ բացահայտվում: Meta–ն նաև նշել է, որ այս տեսակի պատկերները կարող են տարբեր ազդեցություն ունենալ քաղաքացիական անձանց և զինծառայողների վրա՝ ներառյալ մյուս կողմի նկատմամբ անտագոնիզմի ավելացումը և կողմնակալության ավելացումը: Meta-ն նշեց, որ ռազմագերին, ով տեսագրության մեջ քննադատում է իր ազգին կամ իր զինվորականների վարքը, տուն վերադառնալիս կարող է օստրակիզմի և ռեպրեսիաների ավելի մեծ ռիսկի ենթարկվել, քան այն բանտարկյալները, որոնց նկատմամբ թշնամին դաժան է վարվում: Այս հակամարտության համատեքստում Meta-ն ապացույցներ չուներ, որ այս տեսակի տեսանյութերը նման բացասական ազդեցություն են ունեցել, բայց նա ականատես է եղել դեպքերի, երբ միջազգային կազմակերպությունները ռազմագերիների նկատմամբ դաժան վերաբերմունքը դադարեցնելու նպատակով նման տեսանյութերն օգտագործել են Ադրբեջանի վրա ճնշումը մեծացնելու համար: Հաշվի առնելով իրազեկությունը բարձրացնելու և որպես հնարավոր պատերազմական հանցագործությունների ապացույց օգտագործելու համար այս կոնտենտի պոտենցիալ հանրային հետաքրքրվածության արժեքը, Meta-ն եզրակացրեց, որ հաշվի առնելով դրա ընդհանուր լրատվական կարևորությունը՝ այս կոնտենտի հեռացումը համաչափ գործողություն չէր լինի:

28. Meta-ն նաև ավելացրեց, որ վկաներին, լրտուներին, պատանդներին կամ ձերբակալված այլ անձանց նույնականացնող կոնտենտը կարող է հեռացվել Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ համայնքի ստանդարտի համաձայն, եթե ձերբակալության մասին հանրային իրազեկությունը կարող է մեծացնել նրանց անվտանգության ռիսկերը: Անհատներին նույնականացնող կամ բացահայտող կոնտենտը կարող է նաև հեռացվել Գաղտնիության խախտման (Privacy Violations) քաղաքականության համաձայն, երբ Meta-ի հարթակներում անձին նույնականացնող տեղեկություններ են տարածվում: Վերջապես՝ Բռնի և անընդունելի կոնտենտի վերաբերյալ քաղաքականությունը կկիրառվեր, նույնիսկ եթե զոհերը ռազմագերիներ չլինեին,

քանի որ այդ քաղաքականության համաձայն՝ Meta-ն հաշվի է առնում բռնության զոհերի արժանապատվությունն ու անվտանգությունը և այն, որ մարդիկ կարող են չցանկանալ տեսնել այս կոնտենտը:

29. Ի պատասխան Խորհրդի հարցերին՝ Meta-ն նաև օրինակներ է տրամադրել, թե ինչպես է նա լրատվական կարևորության հիմքով թուլտվությունը կիրառում ռազմագերիներին ավել լայն կերպ նույնականացնող կոնտենտին: Օրինակ՝ Meta-ն խորհրդին տեղեկացրեց, որ այն սովորաբար հեռացնում է Եթովպիայում ռազմագերիների ինքնությունը բացահայտող կոնտենտը, բայց յուրաքանչյուր դեպքում որոշում է լրատվական կարևորությունը, թե արդյոք որևէ կոնտենտ լրատվական կարևորություն ունի: Նախորդ դեպքերում լրատվական կարևորության հիմքով թույլտվություն կիրառելիս հաշվի առնված գործոնները ներառում են, թե արդյոք կոնտենտը (i) հաղորդում է բարձրաստիճան մարտիկների, ինչպիսիք են բարձրաստիճան սպաները կամ զինված խմբերի ղեկավարները, գերեվարվելու մասին, (ii) բացահայտում է բանտարկյալի ինքնությունը, երբ դա նրանց շահերից է բխում (օրինակ, երբ նրանք հայտարարվել են անհայտ կորած), կամ (iii) բարձրացնում է իրազեկությունը մարդու իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ: Meta-ն նաև հայտարարեց, որ լրատվական կարևորության հիմքով թույլտվություն է տվել՝ «որոշ կոնտենտներ պահպանելու համար, որոնք ցույց է տալիս Ուկրաինայում ռուս [ռազմագերիներին]»:

30. Meta-ն նաև նշեց, որ կոնտենտը գնահատում է իր անվանական արժեքով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իսկությունը կասկածի տակ է դրվում, կամ երբ կան լրատվամիջոցների մանիպուլյացիայի նշաններ, կամ երբ դրանց համատեքստում նշվում է, որ տեղեկությունները կեղծ են: Այս գործում, Meta-ն որևէ նշան չի տեսել, որ իր ապատեղեկատվական քաղաքականությունը ներառվել է:

31. Խորհուրդը Meta-ին 16 հարց է տվել: Հարցերը վերաբերում են լրատվական կարևորության հիմքով թույլտվությանը, Meta-ի որոշման համատեքստում գնահատման գործոններին, և Հակաճգնաժամային քաղաքականության պրոտոկոլի կիրառմանը: Meta-ն պատասխանել է 16 հարցի:

7. Հանրության մեկնաբանությունները

32. Վերահսկիչ խորհուրդն այս գործի համար կարևոր 39 հանրային մեկնաբանություն է ստացել: Մեկ մեկնաբանություն ստացվել է Ասիական-Խաղաղօվկիանոսյան ու Օկեանիայի շրջանից, երեքը՝ Կենտրոնական և Հարավային Ասիայից, 23-ը՝ Եվրոպայից, չորսը՝ Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Ամերիկայից, և ութը՝ Միացյալ Նահանգներից և Կանադայից:

33. Ներկայացվածները վերաբերում էին հետևյալ թեմաներին. Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատմությունը և վերջին սրացումները, Միջազգային մարդասիրական իրավունքի կիրառումը ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը բացահայտող կոնտենտի մեղմացման համար, Ռազմագերիների դեմքերը ցույց տվող սոցիալական մեդիայի կոնտենտի վերաբերյալ մտահոգությունները, պոտենցիալ անբարենպաստ և դրական ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ ռազմագերիներին պատկերող կոնտենտը թողնելուց կամ հեռացնելուց, Միջազգային հանցագործությունների հնարավոր ապացույցները պահպանող անկախ մեխանիզմները, Համագործակցությունը սոցիալական մեդիա ընկերությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և արդարադատության միջազգային մեխանիզմների միջև, Մտահոգությունը վիդեո կոնտենտի ստուգման վերաբերյալ, Օպերատիվ/տեխնիկական առաջարկներ, թե ինչպես պահպանել կոնտենտը սոցիալական մեդիա հարթակներում և պաշտպանել ռազմագերիների անվտանգությունն ու արժանապատվությունը, նման կոնտենտի ներուժը՝ օգնելու կանխել հետագա դաժանությունները, և հանրության իրավունքը՝ իմանալու ռազմագերիների նկատմամբ վատ վերաբերմունքի մասին:

34. Այս գործի կապակցությամբ ներկայացված հանրության մեկնաբանությունները կարդալու համար խնդրում ենք սեղմել այստեղ

35. 2023թ. ապրիլին Խորհուրդը՝ շահագրգիռ կողմերի հետ շարունակական փոխգործակցության շրջանակներում, ռազմագերիներին պատկերող կոնտենտի մոդերացիային վերաբերող հարցերի շուրջ խորհրդակցել է իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների, գիտնականների, միջկառավարական կազմակերպությունների և այլ փորձագետների հետ: Chatham House-ի կանոններով կլոր սեղան է անցկացվել: Ուշադրության կենտրոնում են եղել ռազմագերիներին պատկերող կոնտենտի տեղադրելու շարժառիթները, հնարավոր ռիսկի գործոնները և օգուտները, ինչպես նաև ռազմագերիների

նկատմամբ բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման առավելությունները նրանց ինքնության բացահայտման հետևանքով առաջացած հնարավոր վնասների հետ հավասարակշռումը: Այս հանդիպման ընթացքում ներկայացված մտքերն արժեքավոր էին, և Խորհուրդն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր մասնակիցներին:

8. Վերահսկիչ խորհրդի վերլուծությունը

36. Խորհուրդը վերլուծել է կոնտենտի վերաբերյալ Meta-ի քաղաքականությունը, մարդու իրավունքների ոլորտում պարտականություններն ու արժեքները, որպեսզի պարզի, թե արդյոք այս կոնտենտը պետք է պահպանվի՝ նախազգուշացնող էկրանով: Խորհուրդը նաև գնահատել է այս գործի հետևանքները կոնտենտի կառավարմանը Meta-ի ավելի լայն մոտեցման համար՝ հատկապես հակամարտային և ճգնաժամային իրավիճակներում:

37. Խորհուրդն ընտրել է այս դեպքը որպես հնարավորություն՝ գնահատելու Meta-ի քաղաքականությունն ու գործելակերպը նույնականացվող ռազմագերիների պատկերող կոնտենտի մոդերացման հարցում: Բացի այդ, գործը հնարավորություն է տալիս Խորհրդին քննել մարդու իրավունքների հանդեպ Meta-ի պարտավորությունների պահպանումը ընդհանուր առմամբ ճգնաժամային և հակամարտային իրավիճակներում:

8.1 Կոնտենտի հանդեպ Meta-ի քաղաքականության պահպանումը

38. Խորհուրդը համարում է, որ չնայած կոնտենտը խախտում է Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ համայնքի ստանդարտը, Meta-ն լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը ճիշտ է կիրառել, որպեսզի թույլ տա, որ կոնտենտը մնա Facebook-ում, և տեսանյութի բովանդակությունը պահանջում է «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրան՝ համաձայն Բռնի և անընդունելի կոնտենտի վերաբերյալ համայնքի ստանդարտի:

I. Կոնտենտին վերաբերող կանոնները

a. Վնաս պատճառելը համակարգելը և հանցագործությունները խթանելը

39. Խորհուրդը գտնում է, որ այս գործի բովանդակությունը բացահայտում է ռազմագերիների ինքնությունը՝ տեսանյութում ներկայացված պատկերների միջոցով, որոնք ցույց են տալիս կալանավորված հայ զինվորների դեմքերը: Այսպիսով, այն ակնհայտորեն խախտել է կանոնը, որն արգելում է նման կոնտենտը՝ ըստ Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ համայնքային ստանդարտի:

40. Ընդունելով, որ այս կանոնին համապատասխանելու համար ավելի շատ տեղեկություններ և/կամ համատեքստ է պահանջվում, խորհուրդը համաձայն է Meta-ի հետ, որ զինվորների համազգեստը ցույց է տալիս, որ տեսանելի դեմքերով անձինք ՀՀ զինված ուժերի զինծառայողներ են: Պատերազմի համատեքստը ցույց է տալիս, որ այդ զինվորները կալանավորվել են հակառակորդ Ադրբեջանի զինված ուժերի կողմից՝ համապատասխանելով «ռազմագերի» հասկացությանը, որը նշված է գրախոսների համար նախատեսված Meta-ի ներքին ուղեցույցում: Այս տեղեկությունները բավարար են՝ համարելու, որ կոնտենտը հակադրվում է այն կանոնին, որն արգելում է պատկերների տարածման միջոցով ռազմագերիների ինքնությունը բացահայտող կոնտենտը:

b. Լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը

41. Խորհուրդը գտնում է, որ տեսանյութի նկատմամբ հանրային հետաքրքրությունը գերակշիռ է վնասի հնարավոր ռիսկերի հանդեպ և որ նպատակահարմար է, որպեսզի էսկալացիոն խմբերը, որոնց հասանելի են փորձը և լրացուցիչ համատեքստային տեղեկությունները՝ ներառյալ միջհարթակային միտումները, կիրառեն լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը՝ հարթակի վրա կոնտենտը պահպանելու համար: Թեև չի ենթադրվում, որ որևէ մեկի խոսքն ի սկզբանե լրատվական կարևորություն ունի, լրատվական կարևորության հիմքով թույլտվության գնահատումը հաշվի է առնում տարբեր գործոններ՝ ներառյալ երկրին հատկորոշ հանգամանքները և խոսքի և բանախոսի էությունը: Նման դեպքերում Meta-ն պետք է մանրակրկիտ վերլուծություն իրականացնի, որը համադրում է հանրային շահերը՝ ներառյալ լուրջ իրավախախտումների մասին իմանալու հանրության իրավունքը և իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակային բացահայտման միջոցով մարդու իրավունքներին սպառնացող լուրջ վնասը կանխելու, մեղմելու և շտկելու ներուժը,

ինչպես նաև անձնական կյանքին, արժանապատվությանը, անվտանգությանը և ձայնին վնաս հասցնելու ռիսկերը՝ համապատասխան Մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, որոնք արտացոլված են Meta-ի Մարդու իրավունքների կորպորատիվ քաղաքականության մեջ:

42. Լրատվական կարևորության հիմքով թույլտվություն կիրառելը այնպիսի բարդ և արագ փոփոխվող իրավիճակում, ինչպիսին զինված հակամարտությունն է, պահանջում է անհատական համատեքստային գնահատում՝ ռիսկերը նվազեցնելու և հանրության համար կարևոր տեղեկատվությանը հասանելիություն ապահովելու համար: Այն գործոնները, որոնք Meta-ն մատնանշել է իր գնահատման մեջ, որոնք մանրամասն նկարագրված են Բաժին 6-ում, բոլորն էլ տեղին են տեսանյութի ցուցադրման հետևանքով հնարավոր լուրջ վնասների գնահատման համար՝ ընդդեմ անբարենպաստ ազդեցությունների, որոնք կարող են առաջանալ այս տեսակի բովանդակության ճնշմամբ: Ապացույցների բացակայությունը, որ նման տեսանյութերն օգտագործվել են տվյալ հակամարտության մեջ ՝ ձերբակալվածների նկատմամբ հետագա դաժան վերաբերմունքի համար, զուգորդված ակնհայտ միտումներով, որ նմանատիպ կոնտենտը հիմնականում հասանելի է սոցիալական մեդիայի միջոցով և մեծ նշանակություն ունի արշավների և դատաքննությունների համար՝ լուրջ հանցագործությունների պատժման համար, խոսում է կոնտենտը հարթակում պահպանելու օգտին:

43. Խորհուրդը շեշտում է, որ կարևոր է, որ Meta-ն ունենա համակարգեր, որոնք թույլ են տալիս ստանալ բարձր համատեքստային տեղեկություններ, ինչն անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում հնարավոր վնասն արագ գնահատելու համար՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների ոլորտում Meta-ի պարտավորությունները:

c. Բռնի և անընդունելի կոնտենտը

44. Իր որոշումից հետո, որ կոնտենտը պետք է թողնվի լրատվական կարևորության հիմքով թույլտվության ներքո, Խորհուրդը գտնում է, որ տեսանյութի բռնի և անընդունելի բնույթն արդարացնում է «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրանի տեղադրումը, որը կրկնակի գործառույթ է իրականացնում՝ զգուշացնել օգտատերերին կոնտենտի անընդունելի բնույթի մասին և կոնտենտը դիտելու հնարավորությունը սահմանափակել 18-ից ավել տարիքի մեծահասակներով: Թեև Meta-ն չի նշել քաղաքականության այն գիծը, որի

վրա հիմնվել է այս էկրանը պարտադրելու համար, Խորհուրդը գտնում է, որ երկու կանոն է կիրառվել:

45. Նախ՝ տեսանյութում երևում է, որ հայ զինվորների դիեր են ընկած փլատակների տակ: Թեև մոդերատորների համար նախատեսված ներքին ուղեցույցները բացառում են ոստիկանական գործառույթ իրականացնող համազգեստով մեկ կամ մի քանի անձանց կողմից, որի դեպքում «նշել որպես զգայուն» նախազգուշացնող էկրան կկիրառվի, ներքին ուղեցույցները հետագայում «ոստիկանության գործառույթը» սահմանում են որպես «հասարակական կարգի պահպանում՝ ամբոխի վերահսկողության և/կամ մարդկանց ձերբակալման միջոցով» և պարզաբանում են, որ «պատերազմը չի որակվում որպես ոստիկանական գործառույթ»: Քանի որ կոնտենտը վերաբերում է զինված հակամարտության իրավիճակին, Խորհուրդը գտնում է, որ այն համապատասխանում է «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրան տեղադրելու Meta-ի քաղաքականությանը:

46. Խորհուրդը նշում է, որ տեսանյութը նաև օգտագործել է քաղաքականության երկրորդ գիծը, քանի որ այն ցույց է տվել գործողություններ, որոնք համապատասխանում են Meta-ի՝ մարդկանց նկատմամբ խոշտանգումների սահմանմանը: Meta-ի քաղաքականությունը կիրառելու նպատակով մոդերատորների համար նախատեսված ներքին ուղեցույցները որպես «խոշտանգում» սահմանում են այնպիսի պատկերները, ինչպիսիք են՝ (i) գերիշխման տակ գտնվող կամ բռնի կերպով պահվող անձի պատկերները, և հետևյալներից որևէ մեկը ՝ (a) անձի վրա զենք է ուղղված, (b) անձի վրա առկա են մարմնական վնասվածքի հետքեր, կամ (c) անձը ենթարկվում է բռնության, կամ (ii) նվաստացուցիչ գործողությունների ենթարկված անձի պատկերը: Meta-ն հետագայում «գերիշխման տակ գտնվելը» սահմանում է որպես ցանկացած վիճակ, երբ զոհը ծնկների վրա է կանգնած, անկյուն է քշված կամ անկարող է իրեն պաշտպանել, իսկ «բռնի կերպով պահելը»՝ որպես ֆիզիկապես կապված, կապկապված, հողի մեջ թաղված լինելը կամ այլ կերպ՝ իր կամքին հակառակ պահվելը»: Նշելով, որ Meta-ի «խոշտանգում» եզրույթի սահմանումը շատ ավելի լայն է, քան հասկացվում է միջազգային իրավունքի մեջ, Խորհուրդը գտնում է, որ համապատասխան է եղել Meta-ի կանոններին՝ «նշել որպես անհանգստություն պատճառող» էկրան կիրառելուն և ուղեկցող տարիքային սահմանափակումներին: Ներքին ուղեցույցին համապատասխան՝ կոնտենտի մեջ բավարար ցուցիչներ

կան, որ անհատները՝ իրենց կամքին հակառակ, պահվում են որպես կալանավորներ և չեն կարողանում պաշտպանվել: Ավելին, մի քանի կալանավորվածներ վիրավոր են թվում, մինչդեռ մյուսներն՝ ըստ երևույթին մահացած են:

8.2 Մարդու իրավունքների ոլորտում Meta-ի պարտավորությունների պահպանումը

47. Խորհուրդը գտնում է, որ կոնտենտը թողնելու Meta-ի որոշումը համահունչ է մարդու իրավունքների ոլորտում Meta-ի ստանձնած պարտավորություններին, որոնք ուժեղանում են զինված հակամարտության իրավիճակում:

Արտահայտման ազատությունը (ICCPR-ի Հոդված 19)

48. ICCPR-ի Հոդված 19-ի, պարագրաֆ 2-ը Լայն պաշտպանություն է նախատեսում ազատորեն կարծիք արտահայտելու համար՝ ներառյալ տեղեկություններին հասանելի լինելու իրավունքը: Այս պաշտպանության միջոցները գործում են զինված հակամարտությունների ժամանակ և պետք է շարունակեն հիմք հանդիսանալ մարդու իրավունքների ոլորտում Meta-ի պարտավորությունների համար՝ փոխադարձ ուժեղացնելով իրար ու փոխազդելով միջազգային մարդասիրական օրենքների համապատասխան նորմերի հետ https://www.icrc.org/en/document/what-difference-between-ihl-and-human-rights-law, որոնք կիրառվում են նման հակամարտությունների ժամանակ՝ ներառյալ ռազմագերիներին պաշտպանելու համար (Ընդհանուր բնույթի դիտողություն՝ 31, Մարդու իրավունքների կոմիտե, 2004թ., պարագրաֆ 11, UNGP-ների մեկնաբանություններ, Սկզբունք 12. Տե՛ս նաև ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի զեկույցները՝ նվիրված զինված հակամարտությունների ժամանակ ապատեղեկատվությանը և ազատորեն կարծիք արտահայտելուն, Զեկույց A/77/288, պարագրաֆներ 33-35 (2022), և OHCHR-ի զեկույցը զինված հակամարտությունների ժամանակ մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունը (2011) էջ 59):

49. Միջազգային մարդասիրական իրավունքը հատուկ երաշխիքներ է տրամադրում ռազմագերիների հետ վարվելու վերաբերյալ՝ մասնավորապես արգելելով ռազմագերիների նկատմամբ բռնության կամ ահաբեկման գործողությունները, ինչպես նաև նրանց վիրավորանքների և հասարակական հետաքրքրասիրության ենթարկելը: (Հոդված 13, պարագրաֆ. 2՝ Ժնևյան կոնվենցիա (III)): Զինված հակամարտության ընթացքում կարծիք արտահայտելու ազատության վերլուծությունը Խորհրդի կողմից

հենված էր միջազգային մարդասիրական իրավունքի ավելի կոնկրետ նորմերի վրա: Հոդված 13-ի վերաբերյալ ԿԽՄԿ-ի (ICRC) դիտողությունը բացատրում է, որ «հանրային հետաքրքրասիրությանը» ենթարկվելը որպես ռազմագերի, նույնիսկ այն դեպքում, երբ նման բացահայտումը չի ուղեկցվում վիրավորական արտահայտություններով կամ գործողություններով, ինքնին նվաստացուցիչ է և, հետևաբար, հատուկ արգելված է, անկախ նրանից, թե հանրային հաղորդակցման որ խողովակն է օգտագործվում՝ ներառյալ ինտերնետը» և այս արգելքից նեղ բացառություններ է տալիս, որոնք քննարկվում են ստորև (ԿԽՄԿ-ի դիտողություններ, էջ 1624):

50. ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը հայտարարել է, որ «զինված հակամարտության ժամանակ մարդիկ գտնվում են առավել խոցելի վիճակում և ճշգրիտ, վստահելի տեղեկատվության ամենամեծ կարիքն ունեն՝ իրենց անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, հենց այդ իրավիճակներում է, որ նրանց կարծիք ունենալու և արտահայտելու ազատությունը, որը ներառում է «ամեն տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, առավել սահմանափակված է պատերազմի հանգամանքներով և հակամարտության կողմերի և այլ դերակատարների գործողություններով, որպեսզի մանիպուլացվի և սահմանափակվի տեղեկատվությունը՝ քաղաքական, ռազմական և ռազմավարական նպատակներով» (Զեկույց A/77/288, պարագրաֆ. 1).

51. Տեղեկատվության հասանելիության իրավունքի կապը, այդ թվում՝ մարդու իրավունքների խախտման զոհերի համար, ընդգծվել է նաև մանդատ կրողի կողմից (Զեկույց Ա/68/362, պարագրաֆ. 92 (2013)): Հակամարտության իրավիճակներում ամենակարևոր լրագրությունը ներառում է ռազմագերիների մասին տեղեկությունների և պատկերների տարածումը: 1945-ին նացիստական համակենտրոնացման ճամբարների ազատագրումից հետո բանտարկյալների մասին, ինչպես նաև 1992-ին Բոսնիայի Օմարսկա ճամբարում բանտարկյալների մասին ականատեսների վկայությունները, վճռորոշ դեր խաղացին այդ պատերազմների սարսափների և կատարված վայրագությունների վերաբերյալ համաշխարհային կարծիքի ձևավորման գործում: Նմանապես, 2004 թ.-ին Իրաքի Աբու Գրեյբ (Abu Ghraib) բանտում բանտարկյալների նկատմամբ դաժան վերաբերմունքի լայնորեն շրջանառվող պատկերները հանգեցրին հանրային դատապարտման և մի քանի դատական հետապնդումների այդ չարաշահումների համար:

52. Այն դեպքերում, երբ կարծիքի արտահայտման սահմանափակումները մտցվում են պետության կողմից, դրանք պետք է համապատասխանեն օրինականության,

օրինական նպատակի, անհրաժեշտության և համաչափության պահանջներին (Հոդված 19, պարագրաֆ 3, ICCPR): Այս պահանջները հաճախ կոչվում են «երեք մասից բաղկացած թեստ»: Խորհուրդն օգտվում է այս շրջանակից՝ մեկնաբանելու համար մարդու իրավունքների ոլորտում Meta-ի պարտավորությունները, որոնք ներառում են կարծիք արտահայտելու ազատությունը հարգելու վերաբերյալ պարտավորությունը: Ինչպես հայտարարել է կարծիք արտահայտելու ազատության վերաբերյալ ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողը, թեև «ընկերությունները չունեն կառավարությունների պարտականությունները, նրանց ազդեցությունն այնպիսին է, որ նրանցից պահանջվում է գնահատել նույն բնույթի հարցերը, որոնք վերաբերում են իրենց օգտատերերի խոսքի ազատության իրավունքի պաշտպանությանը» (զեկույցA/74/486, պարագրաֆ. 41):

I. Օրինականություն (կանոնների հստակություն և մատչելիություն)

53. Մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան՝ օրինականության սկզբունքը պահանջում է, որ խոսքի ազատությունը սահմանափակող կանոնները լինեն հստակ և հանրությանը հասանելի (Ընդհանուր բնույթի դիտողություն՝ 34, պարագրաֆ. 25): Կարծիքի արտահայտումը սահմանափակող կանոնները «չեն կարող ազատության սահմանափակման առումով անսահմանափակ հայեցողություն տալ նրանց, ում հանձնարարված է [դրա] կատարումը և «բավականաչափ ցուցումներ են տալիս նրանց, ովքեր այն կատարում են, որպեսզի նրանք կարողանան պարզել, թե արտահայտման որ տեսակներն են պատշաճ կերպով սահմանափակված և որ տեսակները՝ ոչ» (*նույն տեղում*): Առցանց խոսքը կառավարող կանոնների առումով կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ ՄԱԿԻ Հատուկ զեկուցողն ասել է, որ դրանք պետք է հստակ և կոնկրետ լինեն (A/HRC/38/35, պարագրաֆ. 46): Մարդկանց, ովքեր օգտագործում են Meta հարթակները, պետք է հասանելի լինեն կանոնները և նրանք պետք է հասկանան դրանք, իսկ կոնտենտը հսկողները (content reviewer) պետք է հստակ ցուցումներ ունենան դրանց կիրառման վերաբերյալ:

54. Խորհուրդը գտնում է, որ Meta-ի կանոնը, որն արգելում է ռազմազերիների ինքնությունը բացահայտող կոնտենտը, բավարար չափով պարզ է այս գործով բովանդակությունը կարգավորելու համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս, որ Meta-ի կոնտենտի քաղաքականության հարցերով թիմը բացառիկ դեպքերում կոնտենտը պահպանի, որը հակառակ դեպքում կխախտեր այդ կանոնը, եթե դա է պահանջում հանրային շահը: Անընդունելի և բռնի կոնտենտի վրա «նշել որպես

անհանգստություն պատճառող» էկրան դնելու սկզբունքը բավականաչափ պարզ է՝ այս դեպքում բովանդակությունը կարգավորելու համար:

55. Միևնույն ժամանակ, հանրությանը ներկայացվող Meta-ի բացատրությունները լրատվական կարևորության հիմքով թույլտվության մասին կարող են հավելյալ մանրամասներ տրամադրել, թե ինչպես այն կկիրառվի ռազմագերիների ինքնությունը բացահայտող կոնտենտին: Բովանդակության երեք օրինակներից, որտեղ կիրառվել է լրատվական կարևորության հիմքով թույլտվություն, որը ցույց է տալիս Meta-ի մոտեցումը լրատվական կարևորությամբ կոնտենտի նկատմամբ, և ոչ մեկը չի վերաբերում Վնաս պատճառելը համակարգելու և հանցագործությունները խթանելու վերաբերյալ համայնքային ստանդարտին: Չնայած օրինակներից մեկը վերաբերում է կոնֆլիկտային իրավիճակին, հակամարտությանը հատկորոշ չափանիշները կամ գործոնները կարող են ավելի համապարփակ հրապարակվել՝ որպես հիմքում ընկած քաղաքականության կանոնների բացատրությունների մաս: Ի պատասխան խորհրդի նախորդ առաջարկությունների՝ Meta-ն արդեն ավելի շատ հստակություն է մտցրել լուրերի կարևորության հիմքով թուլտվության հարցում, այդ թվում ՝ իր կարևորության հիմքով թուլտվության հրապարակային բացատրությանն ավելացնելով տեղեկատվություն այն մասին, թե երբ է նա կիրառելու նախազգուշացման էկրանը («Սուդանի անընդունելի տեսանյութ», առաջարկություն թիվ 2) և հանրային բացատրությունը կապել է Համայնքի ստանդարտների նպատակային էջի հետ և օրինակներ ավելացնել լրատվական կարևորության էջին՝ ներառյալ բողոքի ցույցերի օրինակը («Կոլումբիայի բողոքի ցույցերը», առաջարկություն թիվ 2): Խորհուրդը շեշտում է թափանցիկության բարձրացման և օգտատերերին ուղղորդելու կարևորությունը՝ հատկապես ճգնաժամային և կոնֆլիկտային իրավիճակներում:

II. Օրինական նպատակը

a. Նույնականացվող ռազմագերիների պատկերները ներկայացնելն արգելող Համայնքի ստանդարտը

56. Այլոց իրավունքները՝ ներառյալ կյանքի, անձնական կյանքի անձեռնմխելիության և խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից պաշտպանվելու իրավունքը, հարգելը կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումների օրինական նպատակն է (Հոդված 19, պարագրաֆ. 3, ICCPR): Տվյալ դեպքում, նույնականացվող ռազմագերիների ցուցադրության արգելքի հիմքում ընկած նպատակի օրինականության գնահատումը հիմնված է զինված հակամարտության իրավիճակի և միջազգային մարդասիրական օրենքների ավելի

կոնկրետ նորմերի վրա, որոնք պահանջում են պաշտպանել ռազմագերիների կյանքը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը և արժանապատվությունը , երբ կոնտենտը ռազմագերիներին ենթարկում է «վիրավորանքի» և «հանրային հետաքրքրության» (Հոդված 13, պարագրաֆ 2՝ Ժնևյան կոնվենցիա (III)):

57. Զինված հակամարտության համատեքստում Ժնևյան III Կոնվենցիայի Հոդված 13-ը պաշտպանում է ռազմագերիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը, իսկ Meta-ի ընդհանուր կանոնը՝ զուգորդված լրատվական կարևորության հիմքով թույլտվության հետ, աջակցում է այդ գործառույթին: Ի լրումն պոտենցիալ արտացանցային բռնության, պատկերների տարածումն ինքին կարող է նվաստացուցիչ լինել, և խախտել կալանավորվածի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ հատկապես, եթե կալանավորված անհատները չեն կարող ողջամիտ համաձայնություն տալ, որ նման նկարներ արվեն կամ տարածվեն: Այդ պատկերների տարածումը կարող է կրկնակի վիկտիմիզացիայի ենթարկի զոհին, և ցույց է տալիս, թե ինչպես սոցիալական մեդիան կարող է ի վնաս օգտագործվել՝ ուղղակիորեն խախտելով պատերազմի օրենքները: Սա վերաբերում է ոչ միայն պատկերված ռազմագերիներին, բայց ավելի լայն պաշտպանական գործառույթ է իրականացնում ռազմագերիների՝ ինչպես նաև ընտանիքի անդամների և այլոց համար, ովքեր կարող են թիրախ դառնալ: Այդ իրավունքների պաշտպանությունը սերտորեն կապված է Meta-ի անձնական կյանքի անձեռնմխելիության, անվտանգության և արժանապատվության արժեքների հետ: Խորհուրդը գտնում է, որ նույնականացվող ռազմագերիների պատկերների ներկայացումն արգելող Meta-ի Համայնքի ստանդարտն օրինական է:

b. *Նախազգուշացնող էկրանի վերաբերյալ Meta-ի կանոնները*

58. Խորհուրդը հաստատում է, որ բռնի և անընդունելի կոնտենտի վերաբերյալ Meta-ի կանոններն օրինական նպատակներ են հետապնդում «Սուդանի անընդունելի տեսանյութի» դեպքում և մի շարք դեպքերում դրանից հետո: Այս գործի և դրան նման այլ համատեքստերի դեպքում «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրան նախատեսող կանոնները նպատակամղված են օգտատերերին ընտրության ավել շատ տարբերակներ ընձեռել առ այն, ինչ նրանք տեսնում են առցանց:

III. Անհրաժեշտությունը և համաչափությունը

59. Անհրաժեշտության և համաչափության սկզբունքը նախատեսում է, որ կարծիք արտահայտելու ազատության ցանկացած սահմանափակում «պետք է տեղին լինի՝ իր պաշտպանիչ գործառույթն իրականացնելու համար. դրանք պետք է ամենաքիչ ինտրուզիվը լինեն այն գործիքների մեջ, որոնք կարող են հասնել իրենց պաշտպանիչ գործառույթին», և «դրանք պետք է համաչափ լինեն պաշտպանվող շահերին»: (Ընդհանուր բնույթի դիտողություն՝ No. 34, պարգրաֆ. 34):

60. Անհրաժեշտության և համաչափության վերաբերյալ Խորհրդի վերլուծությունը հիմնվում է միջազգային մարդասիրական իրավունքի ավելի կոնկրետ նորմերի վրա: Համաձայն ICRC-ի՝ Ժնևյան III կոնվենցիայի, Հոդված 13-ի պարագրաֆ. 2-ը պահանջում է «ողջամիտ հավասարակշռություն» պահպանել ռազմագերիներին պատկերող նյութերի հրապարակային բացահայտման առավելությունների՝ հաշվի առնելով նման նյութերի բարձր արժեքը, երբ դրանք օգտագործվում են որպես ապացույցներ պատերազմական հանցագործությունների դատական հետապնդման, պատասխանատվության ուժեղացման և չարաշահումների մասին հանրային իրազեկությունը բարձրացնելու համար, և հնարավոր նվաստացումների և նույնիսկ ֆիզիկական վնասների միջև, որոնք կարող են պատճառվել տարածված նյութերում նշված անձանց: Ավելին, ICRC-ը լրատվամիջոցների համար նախատեսված իր ուղեցույցում նշում է, որ նման նյութերը կարող են բացառության կարգով բացահայտվել, եթե կա բանտարկյալի ինքնությունը բացահայտելու «անհաղթահարելի համընդհանուր հետաքրքրություն», կամ եթե դա բխում է բանտարկյալի «կենսական շահերից» (ICRC-ի դիտողությունները Հոդված 13-ի վերաբերյալ՝ (1627)):

61. Meta-ի լռելյայն կանոնը համահունչ է միջազգային մարդասիրական իրավունքում ամրագրված նպատակներին: Որոշել, թե արդյոք պատկերված անձը զինված հակամարտության համատեքստում նույնականացվող ռազմագերի է, փորձագիտական դիտարկում է պահանջում: Հետևաբար, կանոնը, որը «կիրառման համար համատեքստ» է պահանջում և այդպիսով, նախքան կիրառվելը՝ ներքին թիմերին էսկալացում է պահանջում, անհրաժեշտ է: Այն դեպքում, երբ կոնտենտը բացահայտում է ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը, կոնտենտի հեռացումն ընդհանուր առմամբ համաչափ կլինի՝ հաշվի առնելով նման կոնտենտի հետևանքով առաջացած վնասների ծանրությունը: Բազմաթիվ հանրային մեկնաբանություններ կիսվում են նման վնասի օրինակներով: Մտահոգություններ են հնչեցվել քարոզչական նպատակներով ռազմագերիներին պատկերող կոնտենտի օգտագործման վերաբերյալ (տե՛ս, օրինակ՝ PC-11137-ը Digital Rights Foundation-ից և PC-11144-ը Իգոր Միրզախանյանից), հատկապես, երբ այդ պատկերները տարածվում են կալանավորումն իրականացրած իշխանությունների կողմից:

62. Ռազմագերիներին բազմաթիվ պոտենցիալ վտանգներ կարող են սպառնալ, երբ նրանց ինքնությունը բացահայտվում է (տե՛ս օր՝ PC-11096-ը Հոդված 19-ից): Դրանք կարող են ներառել ռազմագերիների նվաստացումը և նրանց կամ նրանց ընտանիքի անդամներին բոյկոտելն ազատագրումից հետո: Միևնույն է՝ կարող են լուրջ վնասներ առաջանալ, նույնիսկ եթե օգտատերը կոնտենտը կիսում է իրազեկությունը բարձրացնելու կամ վատ վերաբերմունքը դատապարտելու նպատակով: Այս գործում ենթադրյալ ռազմագերիների դեմքերը տեսանելի են, և նրանք պատկերված են գերեվարվելիս: Այդ գործընթացն ուղեկցվում է անընդհատ վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ բղավելով՝ ուղղված գերիներին, որոնցից մի քանիսը կարծես թե վիրավորված են, իսկ մյուսները՝ մահացած:

63. Այնուամենայնիվ, այս գործում լրատվական կարևորության հնարավորությունը ճիշտ է պարզված՝ բերելով էսկալացիայի Կոնտենտի վերաբերյալ քաղաքականության թիմին: Կարևոր է ապահովել, որ այս տեսակի էսկալացիաներ հասնեն այն թիմերին, որոնք անհրաժեշտ փորձառությունն ունեն գնահատելու համար մարդու իրավունքների համալիր կիրառումը, որտեղ հնարավոր վնասն անխուսափելի է: Ձինված հակամարտության համատեքստում այս ռիսկերի լրջությունը տարբերում է այս գործը նախկին որոշումներից, որտեղ Խորհուրդը մտահոգություն է հայտնել լրատվական կարևորության հիմքով թույլտվության մասշտաբայնության վերաբերյալ (տե՛ս, օրինակ՝ «Սուդանի անընդունելի տեսանյութը» կամ «Հնդկաստանում սեռական ոտնձգությունների մասին տեսանյութը»):

64. Տվյալ գործի տեսանյութը փաստում է միջազգային մարդասիրական իրավունքի ենթադրյալ խախտումները: Թեև տեսանյութը կարող է արված լինել գերեվարող ուժի կողմից, թվում է, որ օգտատիրոջ գրառումը նպատակաուղղված է եղել պոտենցիալ խախտումների մասին իրազեկվածության բարձրացմանը: Սա կարևոր է գերի վերցնելու փաստի, նրանց ողջ լինելու ապացույցների և կալանքի ֆիզիկական պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքի, ինչպես նաև հնարավոր ապօրինությունների վրա լույս սփռելու համար:

65. Ճիշտ է, որ Meta-ի լրատվական կարևորության հիմքով թույլտվությունը կարող է կիրառվել կոնտենտի համար, որը չի տարածվել պրոֆեսիոնալ լրատվամիջոցներով: Այնուամենայնիվ, կոնֆլիկտային իրավիճակներում լրագրողներին հասանելի ուղեցույցները պատասխանատու լուսաբանման վերաբերյալ նշում են ռազմագերիների ինքնությունը հաստատող պատկերների բացահայտման անթույլատրելիության կանխավարկածը և որ նույնիսկ այն դեպքում, երբ

անհաղթահարելի համընդհանուր հետաքրքրություն կա, այնուամենայնիվ պետք է ջանքեր գործադրվեն պաշտպանելու կալանավորների արժանապատվությունը:

66. Կարևոր է, որ սոցիալական մեդիա ընկերությունները պահպանեն այն կոնտենտը, որը պակերում է մարդու իրավունքների լուրջ խախտումներ կամ վայրագ հանցագործություններ, ինչպիսիք են Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտով հատկորոշված հանցագործությունները՝ ներառյալ ռազմագերիների դեմ կատարված հանցագործությունները: Հանրային մեկնաբանություններն ընդգծել են Meta-ի կողմից այս ոլորտում իր գործելակերպի ավելի մեծ հստակության անհրաժեշտությունը, հատկապես միջազգային մեխանիզմների հետ համագործակցության համար (տե՛ս PC-11128-ը Trial International-ից, PC-11136-ը Բոխումում Ռուրի համալսարանի Խաղաղության և զինված հակամարտությունների միջազգային իրավունքի ինստիտուտից և PC-11140-ը Սիրիայի արդարադատության և պատասխանատվության կենտրոնից): Նրանք ընդգծեցին, որ նման կոնտենտի պահպանումը կարևոր է ոչ միայն հանցագործներին, այլև զոհերին հայտնաբերելու համար (տե՛ս, օրինակ՝ PC-11133-ը Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնից, PC-11139-ը Digital Security Lab Ukraine-ից և PC-11145-ը Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ից): Խորհրդի կարծիքով, այդ կոնտենտը, որը պատշաճ կերպով գնահատված է իր կոնկրետ համատեքստով, ոչ միայն իրական ժամանակում տեղեկացրել է հանրությանը, այլև աջակցել է գերեվարող իշխանությունների վրա ճնշում գործադրելուն՝ պաշտպանելու համար գերեվարվածների իրավունքները: Ժնևի III կոնվենցիայի համաձայն՝ ԿԽՄԿ-ն հեշտացնում է ռազմագերիների և նրանց ընտանիքի անդամների նամակագրության փոխանակումը՝ «կանխելու անհայտ կորելու դեպքերը և պահպանելու ընտանեկան կապերը՝ առանց ռազմագերիների արժանապատվությունն ու անվտանգությունը խախտելու:»

67. Բովանդակության վրա նախազգուշացնող էկրան կիրառելու որոշումը անհրաժեշտ էր և համաչափ՝ հարգելով բանտարկյալների և նրանց ընտանիքների իրավունքները, որոնք կարող էին հոգեկան տառապանք ունենալ՝ նման կոնտենտում ակամա հայտնվելու արդյունքում: Խորհրդի՝ «Նիգերիայի եկեղեցու վրա հարձակումից հետո արված տեսանյութի» վերաբերյալ որոշման նման, այս գործի կոնտենտը ներառում էր տեսանյութ, որը մոտ տարածությունից ցուցադրում էր հանգուցյալների մարմինները և վիրավորներին, նրանց դեմքերը երևում էին, և ռազմագերիների ձայնագրությունը, ովքեր խոր դիսկոմֆորտ էին ապրում իրենց գերեվարողների բանավոր վիրավորանքներից: Գործի կոնտենտը հակադրվում է «Ռուսական պոեմ» գործի կոնտենտին, որը նույնպես վերաբերում էր կոնֆլիկտային իրավիճակին, որտեղ Խորհուրդը որոշեց, որ կոնտենտը չպետք է տեղադրվեր «նշել որպես

անհանգստություն պատճառող» էկրանի հետևում: Այդ գործի կոնտենտը հեռու տարածության վրա գետնին ընկած մարմնի անշարժ պատկերն էր, որտեղ տուժողի դեմքը չէր երևում: Խորհուրդը եզրակացրեց, որ «լուսանկարում բացակայում էին բռնության հստակ տեսանելի ցուցիչներ, ինչպես նկարագրված է Meta-ի ներքին ուղեցույցներում՝ ուղղված կոնտենտի մոդերատորներին, ինչը կհիմնավորի նախազգուշացնող էկրանի օգտագործումը»: Այս գործում, թեև նախազգուշացնող էկրանը, հավանաբար, կնվազեցներ կոնտենտի հասանելիությունը և, հետևաբար՝ դրա ազդեցությունը հանրային խոսույթի վրա, օգտատերերին անհանգստացնող կոնտենտը նայելու ընտրության հնարավորություն տալը համաչափ միջոց է: Բազմաթիվ հանրային մեկնաբանություններ, այդ թվում՝ հակամարտություններ ունեցող տարածաշրջանների մարդկանց կողմից, հավանություն են տվել նախազգուշացնող էկրանների կիրառմանը՝ հաշվի առնելով տեսանյութի անընդունելի բնույթը և բովանդակությունը պահպանելու հանրային մեծ հետաքրքրությունը (տե՛ս, օրինակ՝ PC-11139 Digital Security Lab Ukraine-ից, PC-11144 Իզոր Միրզախանյանից և PC-11145 «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ից):

9. Վերահսկիչ խորհրդի որոշումը

Վերահսկիչ խորհուրդն ուժի մեջ է թողնում Meta-ի որոշումը՝ պահպանել կոնտենտը՝ «նշել որպես անհանգստություն պատճառող» նախազգուշացնող էկրանով:

10. Առաջարկներ

A. <u>Կոնտենտին վերաբերող քաղաքականությունը</u>

1. Համապատասխան «նախկին նախագահ Թրամփի պաշտոնանկության» գործի վերաբերյալ արված թիվ 14 առաջարկին՝ Meta-ն պետք է պարտավորվի պահպանել և, անհրաժեշտության դեպքում, իրավասու մարմիններին ապացույցներ փոխանցել բռնի հանցագործությունների կամ մարդու իրավունքների լուրջ խախտումների մասին, ինչպիսիք են Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտով հատկորոշված հանցագործությունները՝ թարմացնելով իր ներքին քաղաքականությունը, որպեսզի հստակեցնի այս առնչությամբ իր ունեցած պրոտոկոլները: Պրոտոկոլը պետք է զգայուն լինի հակամարտության իրավիճակների հանդեպ: Նրանում պետք է բացատրված լինեն չափանիշները, գործընթացները և երաշխիքները հետևյալի համար՝ (1) պահպանումը սկսելու և դադարեցնելու՝

ներառյալ տվյալների պահպանման ժամկետները, (2) պահպանման դիմումների ընդունումը, (3) և տվյալների փոխանակումն իրավասու մարմինների հետ՝ ներառյալ միջազգային պատասխանատվության մեխանիզմները և դատարանները: Պետք է օգտատերերի համար պատշաճ իրավական գործընթացների և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի երաշխիքներ նախատեսված լինեն՝ համապատասխան տվյալների պաշտպանության գործող միջազգային օրենքների: Քաղաքացիական հասարակությունը, գիտական հանրությունը և ոլորտի այլ փորձագետներ պետք է մասնակցեն այս պրոտոկոլի մշակմանը: Խորհուրդն այս առաջարկը կհամարի իրականացված, երբ Meta-ն իր թարմացված ներքին փաստաթղթերը ներկայացնի Խորհրդին:

B. <u>Կիրարկումը</u>

2. Հետևողական կիրարկումն ապահովելու համար Meta-ն պետք է թարմացնի Ներքին կիրառման Ստանդարտները՝ ավելի կոնկրետ ուղեցույց տրամադրելու լրատվական կարևորության հիմքով թույլտվություն կիրառման վերաբերյալ այն կոնտենտին, որը նույնականացնում կամ բացահայտում է ռազմագերիների գտնվելու վայրը՝ համահունչ սույն որոշման Բաժին 8-ում նշված գործոնների, որոնք լրատվական կարևորությունը պարզելու համար ուղղորդում են այս կոնտենտի և՛ էսկալացիան, և՛ գնահատումը: Խորհուրդն այս առաջարկը կհամարի իրականացված, երբ Meta-ն ներառի այս խմբագրումը և իր թարմացված ուղեցույցը ներկայացնի Խորհրդին:

C. <u>Թափանցիկությունը</u>

3. Օգտատերերի համար ավելի մեծ հստակություն ապահովելու նպատակով Meta-ն պետք է Թափանցիկության կենտրոնում լրատվական կարևորության հիմքով թույլտվության բացատրությանն ավելացնի կոնտենտի օրինակ, որը բացահայտում է ռազմագերիների ինքնությունը կամ գտնվելու վայրը, բայց պահպանվել է հանրային հետաքրքրության պատճառով: Խորհուրդն այս առաջարկը կհամարի իրականացված, երբ Meta-ն իր լրատվական կարևորության էջը թարմացնի ռազմագերիներին վերաբերող օրինակով:

4. Բռնի հանցագործությունների և մարդու իրավունքների կոպիտ խախտումների հետ կապված ապացույցների պահպանման պրոտոկոլի մշակումից հետո Meta-

ն պետք է հրապարակայնորեն տարածի այս պրոտոկոլը Թափանցիկության կենտրոնում: Այն պետք է չափանիշներ պարունակի պահպանումն սկսելու և դադարեցնելու, տվյալների պահպանման ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև գործընթացներ և երաշխիքներ հետևյալի համար՝ պահպանման դիմումների ընդունումը և տվյալների փոխանակումն իրավասու մարմինների հետ՝ ներառյալ միջազգային պատասխանատվության մեխանիզմները և դատարանները: Պետք է օգտատերերի համար պատշաճ իրավական գործընթացների և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի երաշխիքներ նախատեսված լինեն՝ համապատասխան տվյալների պաշտպանության գործող միջազգային օրենքների: Խորհուրդն այս առաջարկը կհամարի իրականացված, երբ Meta-ն հանրայնորեն տարածի այդ պրոտոկոլը:

*** Ընթացակարգային նշում.**

Վերահսկիչ խորհրդի որոշումները պատրաստվում են հինգ անդամներից բաղկացած հանձնաժողովների կողմից և հաստատվում խորհրդի անդամների մեծամասնությամբ: Խորհրդի որոշումները պարտադիր չէ, որ ներկայացնեն բոլոր անդամների անձնական կարծիքները:

Այս գործի որոշման համար Խորհրդի անունից անկախ հետազոտություն է պատվիրվել: Խորհրդին աջակցել է անկախ հետազոտական ինստիտուտը, որի կենտրոնակայանը գտնվում է Գյոթեբուրգի համալսարանում, և որը համագործակցում է ավելի քան 50 սոցիոլոգի հետ՝ վեց մայրցամաքից, ինչպես նաև ավելի քան 3200 փորձագետների հետ ողջ աշխարհի երկրներից: Խորհրդին աջակցել է նաև Duco Advisors խորհրդատվական ընկերությունը, որի հետաքրքրությունները գտնվում են աշխարհաքաղաքականության, վստահության ու անվտանգության և տեխնոլոգիաների խաչմերուկում: Վերլուծություն է կատարել նաև Memetica կազմակերպությունը, որը զբաղվում է բաց աղբյուրների հիման վրա սոցիալական ցանցային լրատվամիջոցների միտումների հետազոտությամբ: